«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1346

«20» 09 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր
Արմեն Աբգարի Մուրադյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորի կողմից 13.09.2024թ.-ին «Աննարկա» ՍՊԸ-ին ուղղված «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ-3» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) միակողմանի լուծման և 16.09.2024թ.-ին որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման պահանջի ծանուցումները, պարզեցի հետևյալը.

1. <u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Աննարկա» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունիսի 25-ին կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ-3» ծածկագրով համակարգչային սարքերի և պարագաների գնման պայմանագիր:

2. ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 և 03/26/18660-2024 գրություններով Համալսարանը ծանուցվել է մասնավորապես, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06.05.2023թ.-ից մինչև 20.06.2025թ.-ը) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ Ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները և եթե 06.05.2023թ.-ից սկսած «Աննարկա» ՍՊԸ-ն մասնակցել է գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվեն միջոցներ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում նշված ընկերության հետ կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

3. Նախարարությունը հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն, այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում տրամաբանվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից հանդիսանալու մասին որոշումը չի

0001688

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

4. Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:»

5. 13.09.2024թ. «Աննարկա» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծման մասին: Նույն օրը ծանուցումը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

6. 16.09.2024թ. «Աննարկա» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման մասին: Մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից Համալսարանի որևէ հաշվեհամարին փոխանցում չի իրականացվել:

2. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա.Ա.Մուրադյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով բոլոր փաստերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի կարող հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 8-րդ ենթակետի, ինչպես նաև հունիսի 25-ին կողմերի միջև կնքված «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Կարգի 121-րդ կետի համաձայն՝ Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատավարության գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքում որոշման

կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Աննարկա» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունիսի 25-ին կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ-3» ծածկագրով գնման պայմանագիր:

ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 և 03/26/18660-2024 գրություններով Համալսարանը ծանուցվել է մասնավորապես, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06.05.2023թ.-ից մինչև 20.06.2025թ.-ը) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ Ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները և եթե 06.05.2023թ.-ից սկսած «Աննարկա» ՍՊԸ-ն մասնակցել է գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվեն միջոցներ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում նշված ընկերության հետ կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

Նշված ընթացակարգի շրջանակներում «Աննարկա» ՍՊ ընկերության կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 2024 թվականի մայիսի 27-ին:

Սեպտեմբերի 13-ին «Աննարկա» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծման մասին:

Պատվիրատուի ղեկավարի կողմից սեպտեմբերի 16-ին պաշտոնապես ծանուցվելուց հետո «Աննարկա» ՍՊԸ-ն մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Աննարկա» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Կարգի 121-րդ կետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն որոշմամբ ներկայացված հիմքերը՝ «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, գնահատել բավարար:

2. «Աննարկա» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը՝ պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Աննարկա» ՍՊԸ	02656691	ք.Երևան, Քաջազնունի փ. 11/23	X	-	-	20.09.2024թ. ԷԱՃԱՊՁԲ-2024/8-4-ԵՊԲՀ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐ Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ